Ղաղկունիք, կամ Վարաժնունիք գաւառնե-ը, և ասոնց արևմտեան հիւսիսային կողմը Աշոցք։ Ասոնք կը համարուին Այրարատ արքունական նահանգի սեփական գաւառներն կամ վիճակներն։ Իսկ Շիրակ՝ որ ի Հայկազանց հաստատուած և արքունի սեփակա-նութիւն էր՝ Մեծին Տրդատայ ժամանակէն, օտար կամարարկանաց տոհմին ժառանգու-թիւն տրուեցաւ, ինչպէս նաև Երասխաձոր, որ այն տոհմի նահապետին անուամբ կո-չուեցաւ Արշարունիք։ Ասոնց նման արքու-նի սեփականութիւն և մասն Այրարատայ կը թուի լինել և Ճակատք, որ կը գտնուի գրեթէ նահանգին կեդրոնը, և առանձին գաւառ ըլլալու ժամանակն չի գիտցուիր։ Նոյնպէս և Կոգովիտ՝ Մասեաց հարաւային արևմտակողմը, սեփական էր երբեմն արքու-նեաց, և տրուեցաւ ի ժառանգութիւն կրտսեր արքայորդւոց։ — Ասոնցմէ դուրս կը մնան երկու Եփրատական գաւառներն՝ Դաղկոտն և Բագրեւանդ, որ յայտնապէս օտար են բուն Այրարատեան հին նահանգէն, նոյն-պէս և արևմտեան գաւառներն, Վանանդ՝ որ երբեմն Անփսցտ Բաւեան կոչուած է, և յետոյ Վոնդ բուլղարի մը անուամբ այսպէս։ Բասենանք՝ շատ ընդարձակ լինելուն համար երկուքի բաժնուած, որուն հարաւակողմը՝ հա-ւանօրէն իւր հին մասերն՝ Աբեղեանք, Գա-բեղեանք և Հաւնունիք, որոնք Վաղարշակէն պարգև տրուեցան, քանի մը ազատաց և պաշտօնէից և համարուեցան առանձին գա-ւառներ։ — Այրարատայ վրայ գրուած կան բազմաթիւ հին և նոր գրուածքներ, թէ՛ աշ-խարհագրական և թէ պատմական տեղեկու-թիւններով լի, բայց ամէնէն աւելի ընդար-ձակն և նորն է Մեծ. Հ. Ղևոնդ Ալիշանի մեծահատոր և հմտալից տեղագրութիւնն, յորում բոլանդակուած կը գտնենք ամենայն ազգային և օտար աղբիւներ, հանդերձ մե-ծագիր աշխարհագրական քարտիսիւ. տպ. Վենետիկ — Ս. Ղազար 1890, էջ 590։

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԼԵՓԻԿԵԱՆ

Շարայարելի

ԱՍՈՐԱԿԱՆ և ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՁԱՓՈՒԹԻՒՆ

(Շար. տես էջ 345)

Նախընթաց ամսոյ թերթին մէջ խոս-տացածս՝ քանի մի Պաղմոսաց վերածմունքն հայկական չափերու՝ ահա այժմ կը կա-տարեմ։

ՍԱՂՄՈՍ Բ.

3·3·3 Ընդէր խռովեցան հեթանոսք
3·3·3 (եւ) ժողովուրդք խորհեցան լուսնտիս։
5·5 Յանդիման եղեն թագաւորք երկրի,
3·4·4 եւ իշխանք ժողովեցան ի միասին
5·5 Վասն Տեառն և վասն օծելոյ նորա։
3·3·3 Թրգեսցուք զզկապանքս նոցա,
4·(2)·4 եւ ընկեսցուք (ի մէնջ) զզուած նոցա։
5·5 Բընակիչքն յերկինս՝ ծիծաղեսցի (զնոքաք,
5·5 եւ Տէր զգնոսա արհամարհեսցէ։
1·4·4·3 Յայնժամ՝ խօսեսցի 'նդ նոսա բար-(կութեամբ իւրով,
4·3·4·3 եւ սրբասիրութեամբ իւրով՝ խռո-(վեցուսցէ զգնոսա։
3·3·3 Ես կացի թագաւոր ի նմանէ
3·3 Ի վերայ Սիոնի
4·4·4·3 Լերին սրբոյս նորա՝ պատմել զնոյ (զգիրամանքս Տեառն։
3·3·3 Տէր ասաց ցիս որդի իմ ես դու,
3·3 Ես այսօր ծընայ զքեզ։
2·4·4 Խրնդրեա յինէն և տայ քեզ զհե-(թանոսս
5·5 Ի ժառանգութիւն, և իշխանութիւն
4·3 Քեզ զամենայն ծագս երկրի։
3·3·4·3 Հովուեսցես զգնոսա գաւազանաւ (երկաթեաւ,
3·3·3·3 Որպէս զանօթ բրոտի փշրեցես զգ-(նոսա։
5·5 Եւ արդ, թագաւորք, զայս ի միտ (առէք,
4·4 Խրատեսցարուք ամենեքեան
5 Այք դատիք զերկիր։
4·5 Ծառայեցէք Տեառն հրկիւղիւ,
5·5 (եւ) Ցընծացէք առաջի նորա դո-(ղութեամբ։
4·3·4·4 Ընկալարուք զզխբրատ նորա զի մի (բարկացի Տէր,
5·5·5 Եւ կորընչիցիք ի ճանապարհացըն (արդարութեան,

5·5·5 Ի ժամանակի՝ որպէս բորբոք (Հաց)ի
(բարկութիւն Նորա.
3·4·4·3 Երանի՝ ամենեցուն՝ ոք յուսացեալ
(են ի Տէր:

ՍԱՂՄՈՍ Գ.

2·4·3 Տէ՛ր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ,
4·4 Բազումք յարեան ի վերայ իմ.
5·5 Բազումք ասէին Իսկ զանձնէ իմմէ
5·5 Թէ չկա փրկութիւն սոցա առ Աս-
(տուած (իւր).
2·4·3 Այլ դո՛ւ, Տէր, օգնակա՛ն իմ, փառք
(իմ
5·5 Եւ բարձրացուցիչ ես գլխոյ իմոյ:
2·4·3 Ձայնի՛ւ իմով (ես) առ Տէ՛ր կարդացի,
2·4·4 Լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։
4·3·4 Ես ննջեցի և ի քո՛ւն եղէ. զարթեայ,
4·4 Եւ տէր ընդունելի իմ է։
3·4·4 Ոչ երկեայց ես ի բիւրուց զօրաց նոցա,
5·5·5 Ոյք շուրջանակի պատեալ պաշա-
բեալ և պահէին զիս:
2·4·4 Արի՛ Տէր, և փրկեա զիս, Աս-
(տուած իմ.
4·4·3 Զի դու հարեր զամենեսեան՝ ոք էին
5·5 Դ իս թշնամութեամբ ի տարա-
(պարտուց.
4·4·3 Եւ զատամունս մեղաւորաց փշրեա-
(ցես։
5·5·5 Տեառն է փրկութիւն ի (վերայ) ժո-
(ղովրդեան քոյ՝ օրհնութիւն քո։

ՍԱՂՄՈՍ Դ.

2·4·4·3 Ի Տէր յուսացայ. որպէս ասիցէք
(ցանձնը իմ,
5·5 Փոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ։
3·3·3·3 Զի ահա մեղաւորք լարեցին զաղե-
(ղումս (իւրեանց),
5·5·5 Պատրաստ արարին ըզնետս ի կա-
(պարնս՝ ձրգել ընդ խաւար
3·3·3 Այնոցիկ՝ ոք ուղիղ են սրտիւք։
3·3·4 Զի զոր դուն շինեցեր՝ աւերեցին.
3·4 Իսկ արդարքն զի՞ արար։
4·3 Տէր ի տաճար սուրբ իւրում,
3·4 Տէր յերկինս՝ յաթոռ իւրում.
3·3·3 Աչք նորա ի տրնամկեան հայեին,
4·4·4 Արտեւանունք նորա քննեն զորդիս
(մարդկան:
5·5 (Տէր) Քննէ զարդարն և զանպա-
(րիշտն.
4·4 Որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր։
3·3 Տեղասցէ ի վերայ
4·4·3 Մեղաւորաց՝ որոգայթ, հուր և ծը-
(ծումբ.
5·5 Այս միրրիկ բաժին բաժանի նոցա:
2·4·4 Արդար է Տէր, սիրէ զարդարութիւն.
3·3·4 Զտղղութիւն տեսանեն երեսք նորա։

ՍԱՂՄՈՍ ԺԴ.

4·4 Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի (քում)
5·5 Կամ ո՞վ բնակեսցէ ի լեառնի սուրբ քո:
4·4·4·4 Որ գնայ 'մրիծ, զարդարութիւն գոր-
(ծէ, խօսի զմշմարտութիւն
5 Ի սրտի իւրում։
2·4·4 Որ ոչ նենգատրեաց լեզուաւ իւրով,
5·5 Եւ չար ընկերի իւրում ոչ արար։
3·3·3 Նախատինքս նա ոչ առնուցու
5 Ի մերձաւորաց.
5·5·5 Այլ արհամարհեալ Իսկ է առաջի
(նորա չարաղործ։
5·5 Զերկիւղածքս Տեառն փառաւոր առնէ
5·5 Երկնու ընկերի իւրում, (և) ոչ սրտէ.
2·4·3 Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ նա,
3·3·3·3 Եւ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնու.
2·4·4·3 Որ զայս արասցէ՝ (նա) մի սասա-
(նեսցի յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ ԻԶ.

3·3·3·3 Տէր լոյս իմ և կեանք իմ, յումէ՞
(ես երկեայց.
4·4·4·3 Տէր ապաւէն կենաց իմոց, և ես
(յումէ՞ դողացայց:
4·4 Ի մերձենալ առ իս չարաց
5 Ուտել զմարմին իմ.
3·4·4·3 Նեղիչք իմ և թշնամիք իմ (նորա)
(տկարացան և անկան։
5 Թէ պատրաստեսցի
3·4 Ի վերայ իմ պատերազմ,
5·5 Ոչ երկիցէ սիրտ իմ, թէ յարիցէ
4·4 Ի վերայ իմ ճակատամարտ.
5·5 Սակայն և այսուհիկ ի (քնզ) Տէր
(յուսացայ։
5·5 Ըզմի խընդրեցի ի Տեառնէ, և զսոյն
5·5 Աղաչեմ՝ բնակել ինձ ի տան Տեառն
5·5 Զամենայն աւուրսն կենաց իմոց։
5·5 Տեսանել ինձ Տեառն ըզվայելչութիւն
3·4·3 Եւ հրամայն տալ ի տաճարի նորա:
2·4·4·3 Ծածկեաց ի խորանի իւրում յա-
(ւուր չարի զիս
4·4·3 Դ՝ յարկաւ արար զիս ի ծածկոյթ
(խորանի (իւրում)։
4·4 Ի վիսէ բարձր արարեր զիս
4·4·4·3 Եւ այժըմ բարձր արա զգլուխս իմ
(ի վերայ թշնամեաց (իմոց)։
3·4 Շուրջ եղէց և մատուցից
4·4·3 Ի խորանի (նորա) անդ պատարագս
(օրհնութեան.
3·3·4 Օրհնեցից և սաղմոս ասացից Տեառն:
4·4·3 Լուր, Տէր, ձայնի իմում, առ քեզ
(կարդացի.
3·4 Ողորմեա ինձ և լուր ինձ
2·3·4·3 Զի քե՛զ ասեաց սիրտ իմ, (և) խըն-
(դրեցին երեսք իմ

digitised by A.R.A.R.@

2·3·3 Զերե՛սքս քո, Տէր, խնդրեցին։
5.5 Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն,
4·3·4·3 (Եւ) Մի՛ խոտորիր բարկութեամբ ի
(ծառայէ քումմէ, Տէր։
3·3 Օգնական իմ լեր, Տէր,
5·5·5 Եւ մի՛ անարգեր զիս և մի՛ թողուր,
(Աստուած փրկիչ իմ։
4·3·4·3 Հայր իմ և մայր իմ թողին զիս, և
(Տէր զիս ընկալաւ.
3·3 Օրէնքդ ցո՛ւր արա զիս, Տէր.
5·5 Ի ճանապարհի քում առաջնորդեա
4.4 Ինձ ի շտիղղս քո ուղղոյ։
5·5·5 Վասնզի թշնամեաց իմոց մի՛ մատ-
(ներ զիս ի ձեռս նեղչաց (իմոց)։
5·5 Յարեան ի վերայ իմ վրկչաք մեղաց,
5·5 Եւ սրտեցին ինձ յանօրէնութեան
(իւրեանց)։
4·3 Հաւատացի տեսանել
4·4·3 Ըզբարութիւն Տեառնըն յերկիրս կեն-
(դանեաց.
3·5 Համբե՛ր Տեառն և քաջալերեաց.
4·5 Զօրացի սի՛րտ քո և համբեր Տեառն։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

3·3·3 Առ քեզ, Տէր, համբարձի զաչըս իմ
4·4 Որ բընակեալդ ես ի յերկինս.
3·5·5 Որպէս աչք ծառայից ի ձեռըս տե-
(րանց իւրեանց,
3·5·5 Որպէս աչք աղախնոյ ի ձեռըս տիկ-
(նոջ իւրոյ,
4·4·3 Այնպէս են աչք մեր առ քեզ, Տէ՛ր,
(Աստուած մեր.
2·4·4 Մինչեւ ողորմեսցես ի վերայ մեր։
5·5 Ողորմեաց մեզ, Տէր, ողորմեաց դոս
(մեզ,
5·3 Զի բազում լցաք արհամարհանօք.
5·5·5 Եւ լցս առաւել յոյժ լցան անձինք
(մեր նախատանօք՝
5 5·5 Որ նախատէին զմեզ, (և) արհա-
(մարհանօք ամբարտաւանից։

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ.

3·4·4·3 Առ զեւոս, ահ, բարեբերեալս անդ
(ընդսուէաք և լայաք,
5·5 Որպէս յիշեցաք մեք անդ ըզՍիովն.
5·5·5 Եւ ի մէջ ուռեաց նոցա կախեցաք
(զկտակարանսս մեր։
5·5·5 Անդ հարցանէին զերիչք մեր ըզբանս
(օրհնութեան երգոց,
3·4·4 Գերեվարք մեր ըստիպէին զմեզ և
(ասէին.
4·4·3 Օրհնեցէք մեզ յօրհնութենէն Սիովնի։
3·3·3 Իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս
5 Տեառն յերկիր օտար։
5·5 Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ,
3·3 Մոռացի զիս աջ իմ.
5·5·5 Ընդեսցի լեզու իմ ի քիմս (իմ), թէ
(ոչ յիշեցից ըզքեզ.
3·3 Թէ ոչ նախ նուագեցից
5·5 Զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրա-
(խութեան (իմոյ)։
5·5·5 Յիշեա, Տէր, զորդիսն Եդովմայ՝ յա-
(ւուրն Երուսաղեմի.
4 Ոյք ասէին.
3·3·4·3 Քակեցէք, քակեցէ՛ք, մինչեւ ի
(հիմն հասուցէք։
3·4·4 Դուստրը դոս բաբելացւոց թշուա-
(ռական.
3·3 Երանի՛ որ հատոյց
4·4·3 Ըզհատուցումն՝ զոր դու մեզ հա-
(տուցեր.
3·3 Երանի՛ որ կալաւ
3·4·3 Ըզմանկո՛ւնքս քո, եհար ըզքարի։

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ

3·3 Ի խորոց կարդացի
5·5 Առ քեզ, Տէր խա, Տէր, լուր ձայնի
(իմում.
5·5·5 Եղիցին ականջք քո լսել ըզձայն
(աղօթից իմոց։
5·5 Զանօրէնութիւնս իմ թէ քննես, Տէր,
5·5 Տէր իսկ ո՞ կարէ կալ առաջի քո.
3·4 Զի ի քէն է քաւութիւն։
3·4·4·4 Վասն անուան քո համբերի, Տէր,
(համբեր անձն իմ բանի քում,
4·3 Յուսացաւ անձն իմ ի Տէր։
3·4 Ի պահէ առաւօտու
3·3 Մինչեւ յերեկոյ,
3·4 Ի պահէ առաւօտու
3·3 Յուսացաւ Իսրայէլ (ի Տէր)։
3·4 Ի Տեառն ՝ է ողորմութիւն,
3·3·3 Եւ բազում ի նմանէ՝ է փրկութիւն.
3·3·3·3 (Եւ) Նա փրկէսցէ զիսրայէլ յամենայն
(նեղութեանց (նորա)։

ՎԵՐՋԻՆ. ԱՐՏԱՔՈՅ ՍԱՂՄՈՍԱՑ

3·3·4·3 Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր
(ի տան հօր (իմոյ)։
4·4·3 Արածէի ես ըզխաշնիս հօր իմոյ։
2·4·4 Զեռք իմ արարին սաղմոսարան,
3·4 Եւ մատունք իմ կազմեցին
5 Գործի օրհնութեան։
3·4·3 Իսկ արդ, ո՞ պատմեսցէ զայս Տեառն
(իսում.
3·4·4·3 Ինքն Տէր ամենայնի լրփցէ զայս
(ամենայն։
4·3·4·4 Որ առաքեաց ըզհրեշտակ իւր և ամ-
(բարձ զիս ի հօտէ
5 Խաշանց հօր իմոյ,
5·5 Եւ օծ զիս յօծումնն իւրոյ։

digitised by A.R.A.R.@

2·4·4 Եղարք իմ զեղեցիկք և մեծամեծք
2·4·3 Եւ ոչ հանեցաւ Տէր ընդ նոսա:
3·3·3 Եկի ես ընդ առաջ այլազգւոյն
4·4 Եւ նզովեցի զկուռսն նորա.
4·3 Հանի զսուսերն ի նմանէ,
3·3 Եւ հատի զզլուխ նորին
3·3 Եւ բարձի զմախատինս
3·4 Ցորդւոցն Իսրայելի:

Այսօրինակ խառն տողերով յօրինուած են նաեւ Եղից և Դատաւորաց գրքերուն մէջ գտնուած օրհնութիւնքն Իսրայելացւոց և Բարակայ և Դեբովրայ և այլոց վերաբերեալ երգերը։ Թէ՛ այս վերջիններուս և թէ վերը մէջ բերուած սաղմոսներու և Մեսեայծներուն ոտանաւորները՝ անփոփոխ կերպով շարադրութեան՝ վերածուած են և կամ կրնան վերածուիլ զանազան չափով տողերու, իրենց բնական առոգանութեան օրէնքին հետեւելով. և եթէ հարկ եղած է վերոյգրելոց մէջ սակաւ ուրեք և մը կամ անոնցմէ դերանուն մը աւելցընելու կամ պակսեցընելու, զայն ալ շարադրութեան կարգին մէջ նշանակեր եմ, պակսեցուցածներս փակագծի մէջ ամփոփելով, իսկ աւելցուցածներս նոտրագիր դրոշմելով. երկու կամ երեք տեղ ալ դերանուն կամ մասնիկան մի եռեւառաջութիւն գործեր եմ, և ոչ այլ ինչ. փոխոխութիւնք՝ որ շատ տեղ կ'արդարացուին նոյն իսկ Սաղմոսաց ձեռագիրներու կամ ընթերցուածոց բազմաթիւ տարբերութիւններէն։

Յօդուածս կնքեմ խորհրդածութեամբ մը։ Այսքան և բազմաթիւ համանման օրինակներէ հաստատուած իրողութիւն մի՝ անուրանալի է որ չի կրնար դիպուածական ներդաշնակ շարադրութեան մի արդիւնք լինել, և հարկ է խոստովանիլ որ մեր շարականաց մէջ խառն տողերով ի գործ դրուած տաղաչափութեան արուեստին կը հանդիպինք նաեւ Սուրբ Գրոց երգոց կամ օրհնութեանց թարգմանութեան մէջ, և եթէ ոչ ծայրէ ի ծայր՝ բայց շատ ու շատ տեղեր Սողոմոնի և Յովբայ գրոց և մանաւանդ Դաւթի Սաղմոսաց մէջ։

Սակայն մինչեւ հիմա հաստատածնուս ընդհանրապէս կ'ելլէ ոչ թեթեւ դժուարութիւն մի. այսինքն է, հայկական այս տեսակ խառն տողերով և չափերով յօրինուած կ'երեւին կամ են նաեւ խորենացիէն մեզի աւանդեալ Գողթան երգերու պատառիկները, որք՝ ինչպէս ծանօթ են՝ հետեւեալներն են.

Ա.

4·3 Երկնէր երկին և երկիր.
4·3 Երկնէր և ծիրանի ծով.
4·4·3 Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ ե-
(ղեգնիկն.
4·4 'Դ եղեգան փող՝ ծուխ ելանէր.
4·4 'Դ եղեգան փող՝ բոց ելանէր.
4·4·4·3 Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.
(նա հուր հեր ունէր.
4·4 Ապա թէ բոց ունէր մորուս,
4·4 Ի ' ոչկունքն էին արեգակունք.

Բ

2·4·3 Հեծաւ արի արքայն Արտաշէս
2·4 Ի սեաւրն գեղեցիկ.
3·3 Եւ հանեալ զոսկէօղ
5 Շիկափոկ պարանն,
3·4 Եւ անցեալ որպէս զարծուի
5 Սըրաթեւ ընդ գետն,
3·3 Եւ ծրգեալ զոսկէօղ
5 Շիկափոկ պարանն,
4·4·3 Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց.
2·3·4·4 Եւ շատ ցաւեցոյց ըզմէջք փափուկ
(օրիորդին,
5·5 Արագ հասուցեալ ի բանակըն իւր:

Գ

5·5·5 Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանըն
(Արտաշիսի,
2·3·4·3 Տեղայր մարգարիտ ի հարսնութեան
(Սաթինկանն:

Դ

5·5 Տենչայ Սաթինիկ տիկինըն տենչանս.
5·5 Զարտախոյր խաւարտ և զտից հա-
(լարծի
3·4 Ի բարձիցն Արգաւանայ:

Ե

3·3·3 Ո՜ տայր ինձ ըզծուխն ծգեանն,
4·4 Եւ զառաւօտն Նաւասարդի,
4·4·3 Զվազելն եղանց և ըզվազելն եղջե-
(ռուաց.
4·4·4 Մեր փող հարուաք և թըմբրզի հար-
(կանէաք:

Զ

4 Մինչ դու գնացեր
3·3·3 Եւ զերկիրս ամենայն 'դ քեզ տարար.
5·2·5 Եւ աւերակացրս ո՞րպէս թագաւորեմ:

digitised by A.R.A.R.@

Ե

4·4·3 Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի (Մասիս,
4·3·4·3 Ըզքեզ կայցիս քաջք, տարցին յԱ-զատ ի վեր ի Մասիս.
3·3·3 Անդ կացցես և ըզբոյս մի՛ տեսցես:

Ը

4·4 Հատուած գնացեալ Վարդգէս մա- (նուկն
3·3 Ի Տունաց գաւառէն
5 ԸզՔաստաղ գետով,
4·4 Եկեալ նըստեալ ըզՇրէշ բըլրով
3·3 ԶԱրտիմէդ քաղաքու
5 ԸզԳասաղ գետով,
4·4·3 Կրռել կոփել զդուռն Երուանդայ արքայի:

Մի և նոյն արուեստն է՝ ինչ որ տեսանք շարականաց, սաղմոսաց և այլ տաղաչափական գրուածոց մէջ. դժուարութիւնը ժամանակագրութեան կը վերաբերի։ Համարելով որ թորենացւոյն այս յիշածները բառացի կերպով նոյն լինին հին գողթան թուելեաց կամ վիպասանական երգոց հետ, ինչպէս կարելի է հայկական տաղաչափութեան արուեստը՝ ֆրիստոսէ հինգ կամ վեց դար առաջ ստեղծուած և գործադրուած չհամարիլ, որով հայ ազգին բնիկ կամ հնադարեան ազգերէ առնուած չհամարիլ։ — Այս դժուարութեան լուծումը՝ եթէ կարենամ՝ ուրիշ յօդուածով մէջ կը բերեմ, իսկ եթէ ոչ՝ հմտագոյն բանագիտաց ճարտարութենէն կ՝ակնկալեմ։

Հ. Ա. Տիրոցեան

ԾԱՂԻԿ. Օրաթերթ ազգային, քաղաքական, տնտեսական, գրական, գիտական. — Խմբագրապետ Դ. Բոլատ: Արտասահմանի համար տարեկան գինը 23 ֆր.:

Հասցէ՝ Rédaction du Journal "DZAGHIK" (Galata, Perchembé - Bazar Hamdi-Pacha Han)

CONSTANTINOPLE

ԱՆԻ, ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Պատմական և հնագիտական հետազօտութիւն

ՊՐՕՖ. Ն. ՄԱՌԻ

(Շար. տես էջ 73)

Գ.

Աշտպէս ուրեմն Անին սկսում է զեր խաղալ Բագրատունեաց թագաւորութեան մէջ։ Այս իշխանական ցեղի (որ տուեց Հայաստանին մի հարստութիւն dynastie) հին պատմութիւնը մեզ քիչ է վերաբերում։ Ցեղը չէ նաեւ ընդարձակ կերպով նկարագրել, թէ ինչպէս Բագրատունիք պատերազմների մէջ կարողացան ցոյց տալ իրանց զիւտաւոր, համարձակ և ուժեղ, իսկ խաղաղութեան ժամանակ՝ իմաստուն, գործունեայ և ազգու, ինչպէս խոյս տալով շարունակ ընդհարումներ ունենալուց մահմեդական էմիրների հետ՝ նոքա ձեռք բերեցին Հայ կամաւորական իշխաններից Ախուրեանի յետեւում գտնուած նոցա ցեղական իշխանութիւնները. ինչպէս զգալով իրանց անխոցելի այս նահանգի մէջ, նոքա կարողացան օգուտ քաղել Արաբացոց և Բիւզանդացոց մէջ ունեցած իրանց չեզոքութեամբ. ինչպէս խալիֆաները և կայսրները աշխատում էին անընդհատաբար ճոխացնել նրանց՝ իրանց շնորհներով. ինչպէս երբեմն յաջող արշաւանքով, երբեմն վիրաց թագաւորների և հայ իշխանների հետ ցեղական դաշինքների կապակցութեամբ՝ նոցա յաջողուում էր ստեղծել ամբողջ երկրի համար մի օգտակար modus vivendi, և այսպիսով ստեղծել մի քաղաքական այժ, որ պատկառելի էր նաեւ մեծ զօրութեանց առաջ։ Բաւական է մեզ գիտենալ, որ իններորդ դարում Բագրատունիք արդէն ամուսնուում էին Թագաւորներ, և եթէ այդ թագաւորական իշխանութիւնը չկարողացաւ բոլո-

digitised by A.R.A.R.@